

ԳՈՐԻՍՅԱՆ ՆԱԽԱԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ս.ԽԱՆՉԱԴՅԱՆԻ «ՄԱՏՅԱՆ ԵՂԵԼՈՒԹՅԱՆՑ» ԵՎ Ա.ԲԱԿՈՒՆՑԻ «ԿՅՈՐԵՍ» ՎԻՊԱԿՆԵՐՈՒՄ

Չեկուցման մեջ անդրադարձել ենք Ս. Խանզադյանի «Մատյան եղելությանց» և Ա. Բակունցի «Կյորես» վիպակներին: Վիպակները կոչված են քարտեզագրելու մեծ հայրենիքի կորուսյալ ու պահպանված եզերքները: Կարոտի երգ են հյուսում հեղինակները՝ աչքի առաջ ունենալով հայրենի գյուղաքաղաքի՝ անդառնալիորեն հեռացած անցյալը, առասպելախառն պատմությունների խորհրդավոր քողով վարագուրված հնօրյա կյանքն ու սովորությունները: Համեմատել ենք վիպակների նախակերպարները, գնահատել նրանց և ցույց տվել ընդհանրությունները:

Բանալի բառեր՝ Սյունիք, Չանգեզուր, Սերո Խանզադյան, «Մատյան եղելությանց», Ակսել Բակունց, «Կյորես», նախակերպար:

Սերո Խանզադյանն ինքը Գորիսն էր, Սյունիքն էր՝ ամբողջապես, ոգեղենացած: Գորիսի պատմության, Գորիսի բառ ու բանի, Գորիսի ավանդույթների կենդանի կրողն էր:

Իր հայրենիքի բնաշխարհի գույներն ու պատկերները, իր լեռնաշխարհի մարդկանց, նրանց սովորույթներն ու բարքերը գեղարվեստականացնողն ու գրականություն բերողն էր, ինչը մինչ այդ արել էր Բակունցը:

Սերո Խանզադյանը, ինչպես Համո Սահյանն է ասում, 20-րդ դարի երկրորդ կեսի «մեր արձակի օրինական նահապետն է», իսկ նրա թողած գրական ժառանգությունը հայ գրականության «անկողոպտելի գանձերից» է:

Սերո Խանզադյանի համար հայրենիքը պետական-աշխարհագրական Նեղ հասկացություն չէ: Հայրենիքն ամբողջ Հայաստանն է՝ պատմական իր տարածքներով: Եվ պատահական չէ, որ առիթ լինելու դեպքում ասում էր. «Իմ ծննդավայրն ամբողջ Հայաստանն է»: Դրա ապացույցը նրա գրական ողջ ժառանգությունն է: Անգամ հայրենի լեռնաշխարհին կամ իր կենսագրությանն առնչվող և վավերական հիմքեր ունեցող գործերում գեղարվեստական ընդհանրացումներ է անում՝ համազգային, համամարդկային կտրվածքով: Իսկ որոշ գործեր ուղղակի հաստատում են, որ գրողի ծննդավայրն իրոք ամբողջ Հայաստանն է: «Հայրենապատում» մատյանը դրա վառ ապացույցն է: Գրքի տարբեր հատորներում կարելի է հանդիպել մեր հանրապետության ամեն մի բնակավայրի կենսագրության: «Հայրենապատումը», ինչպես Նշում է Սուրեն Աղաբաբյանը, «...իր պատումներով ի մի է բերում, մի առանցքի շուրջ է համախմբում հայոց հայրենիքը՝ աշխարհագրությամբ, նյութական ու հոգևոր իրողություններով, նրա ալեհեր պատմությամբ....»: Բազում են այդ օրինակները:

Այդ բոլորով հանդերձ՝ գրողի հայրենիքը՝ Գորիսն ու Սյունիք-Չանգեզուր լեռնաշխարհն իրենց առանձնահատուկ կնիքն են թողել նրա ստեղծագործական աշխարհի և ազգային գործչի նրա նկարագրի վրա:

Առհասարակ աշխարհագրական միջավայրը մեծ նշանակություն ունի գրողի ներաշխարհի կայացման հարցում: Այն մեծ ազդեցություն է թողնում գրողի հոգեկերտվածքի, աշխարհընկալման կերպի, ինչպես նաև բնությունը ճանաչելու, նրա հետ հաղորդակցվելու և ներդաշնակվելու, գեղեցիկն ընկալելու մոտեցումների վրա:

Սերո Խանգադյանի աշխարհաճանաչողության հիմնական փուլը կայացել է իր հայրենի ծննդավայրում: Դրա լավագույն վկան է «Մատյան եղելությանց» վիպակը (1966), որը մեր գրականության մեջ «քրոնիկոնի ժանրի» բարձրագույն դրսևորումներից է: Վիպակը միանգամից լայն ընդունելություն գտավ:

Այն լայն առումով չի տեղավորվում ժանրի դասական պատկերացումների մեջ: Կարելի է ասել, որ այն ո՛չ վիպակ է, ո՛չ վեպ, ո՛չ էլ վավերագրություն, որովհետև այնտեղ ներկայացված է իսկապես ապրված մի իրողություն, որը հնարավորություն է տալիս պահպանել ժամանակի բարոյահոգեբանական մթնոլորտը, ներկայացնել այնպես, որ ընթերցողին թվում է, թե ինչքան էլ ժամանակ անցնի, այն երբեք չի հնանա:

Ս. Խանգադյանը, ներկայացնելով պատերազմական ու հետպատերազմյան տարիների բարոյահոգեբանական մթնոլորտը Գորիսում, կերտել է հավերժական քանդակներ հիշեցնող կերպարներ: Վեպը, ըստ էության, Ա. Բակունցի «Կյորես»-ի շարունակությունն է:

«Կյորես» վիպակը նույնպես կոչված էր քարտեզագրելու մեծ հայրենիքի կորուսյալ ու պահպանված եզերքները: Կարոտի երգ է հյուսում Բակունցը՝ աչքի առաջ ունենալով հայրենի գյուղաքաղաքի անդամալիորեն հեռացած անցյալը, առասպելախառն պատմությունների խորհրդավոր քողով վարագուրված հնօրյա կյանքն ու սովորությունները:

Ժանրային նկարագրով «Կյորես»-ը վեպ կամ վիպակ չէ սովորական հասկացողությամբ՝ որոշակի սյուժեով, հերոսների գործողության որոշակի սահմանով: Նրա կառուցվածքը նույնպես հիշեցնում է պատմական քրոնիկոնի կամ ավելի ճիշտ՝ գեղարվեստական տարեգրության ժանրը: Տարեգրող հեղինակը քայլ առ քայլ ծավալում է գավառական իրականության սոցիալական բազմերանգ երևույթների, այդ կյանքի հերոսների, նրանց կենցաղի, հասարակական գործունեության, նրանց սոցիալ-դասակարգային և հոգեկան հակասությունների մանրակրկիտ նկարագրությունը:

Բակունցի կերտած պատկերների ամբողջ հյուսվածքը, նրա երգիծանքի տարրերը գերազանցապես հենվում են ժողովրդական-ազգային, նույնիսկ ավելի նեղ շրջանակի՝ զանգեզուրյան-տեղային երգիծական կոլորիտի վրա: Այդ երգիծանքը չունի գրքային աղբյուրներ, այլ, ծնվելով պատմական մի շատ յուրահատուկ ժամանակաշրջանում, իր հերթին արտացոլում էր այդ ժամանակաշրջանի մարդկանց հոգեբանության ու կենցաղի ուրույն պատմությունը:

«Մատյան եղելությանց» և «Կյորես» վիպակներում հեղինակները քայլ առ քայլ բացահայտում են գավառական քաղաքի պատկերը և նրա համապատկերում՝ ժամանակին այդ քաղաքի համար խորհրդանիշներ հանդիսացող մարդկանց:

Ժամանակներն արագորեն փոխվում են, ու նրանց հետ փոխվում է ամեն ինչ՝ մարդկային ու հասարակական հարաբերությունները, անգամ՝ քաղաքի

փողոցների անունները. «Ահա, օրինակ, այս մի փողոցը, որին քաղաքացիք իրենց նախաձեռնությամբ հիմա Անտառահայաց են անվանում: Ի սկզբանե նրա անունը եղել է Փեխի Կոլոլ, հետո՝ Ցարսկի, հետո, ինչպես վկայում է ինքը՝ Ճել Ավան բիճան, կնքվել է Կարմիր Վարդան, հետո էլի նոր անուններ...»:

Նույն պատկերն է նաև «Կյորես» վիպակում, որ բնաբան - հղում ունի Ցիցերոնի հայտնի արտահայտությանը «O tempora, o mores» (Օ՛ ժամանակներ, օ՛ բարքեր), կամ ինչպես Բակունցն էր ասում «Օ՛ Չանգեզուր, օ՛ Կյորես»¹:

Արդեն հուշումը կա, որ լինելու է ժամանակագրություն, ժամանկների հերթագայություն և դրանց բերած բարքերի զանազանություն: Ըստ էության հակադրության մեջ են դրված երկու ժամանակ, Կյորեսի և Գորիսի ժամանակները:

Նահապետական կենցաղի անպաճույճ պարզության ընդհարումը նոր ժամանակների բարքերի հետ, ընդհարում, որ պատմական ակնթարթի մեջ կենտրոնացնում է ժողովրդական կյանքի մի ամբողջ ողբերգություն: Գյուղական արդար համայնքի ուտոպիական անուրջներով ապրող, ավանդապահ, աշխարհին իր միայնակ զանգակատնից նայող հողագործի կամ արհեստավորի համար իսկական ողբերգություն էր քաղաքակրթության դարի բարոյականության ազդեցությունը, որը նրանց հոգում ծնում էր վախի ու հուսահատության խռովահույզ տրամադրություններ:

Պատմելով անցման շրջանի ողբերգական ճշմարտությունը՝ Բակունցը, սակայն, էլեգիա չի կարդում անցյալի մասունքների նկատմամբ, չի արդարացնում ժողովրդական ներքին խավերի ահաբեկումը քաղաքակրթության նորամուծությունների հանդեպ, այլ իր երգիծանքի ոլորտի մեջ է առնում թե՛ հասարակության այսպես կոչված «ընտրյալ» մասին և թե՛ ստորին խավերի ինդիվիդուալիզմն ու նրանց միամիտ երազանքների պատմական սահմանափակությունը:

Ամեն ինչով տարբեր էին Գորիսն և Կյորեսը, որոնցում պարփակվում է մի քաղաք երկու իմաստով, մի բնակավայր՝ երկու տարբեր ժողովրդով, որոնք ունեն իրենց առանձին սովորությունները, առանձին շահերը և մինչև անգամ նրանց անուններն են տարբեր:

Մի կողմը «օտարականներն» են կամ, ինչպես կյորեսեցիք են ասում՝ դարիբականները, մյուս կողմը՝ բուն Կյորեսն է: Հետզհետե ամայանում էր Կյորեսը: Անդունդն էր սուզվում հողագործների ազգը»: Այսինքն՝ եկել է Գորիսի՝ մեծ քաղաքի ժամանակը, որը պիտի փոխարինի գավառական քաղաքին, համեսայն-դեպս, ժամանակը նրա օգտին է աշխատում:

Ա. Բակունցի Կյորեսից շատ քիչ բան է մնացել Ս. Խանգադյանի նկարագրած գավառական քաղաքում, որը «գավառական» է կոչվում միայն այն պատճառով, որ հեռու է մայրաքաղաքից: «Ուղիղ ու լայն են քաղաքի անուն կրող և անանուն փողոցները: Անուն կրողները կոկված, հղկված են ասֆալտով, մայթերին անպտուղ ծառեր ունեն:...Անհամար բարդիները քաղաքին երկնամերձ տեսք են տալիս: Ընկուզենիներն իրենց հզոր ճյուղերը մի պարտեզից մյուսն են հասցնում, կոժի ու վեճի առիթ տալիս հին հարևանների միջև»²:

¹ Սովետահայ գրականության պատմություն, առաջին հատոր, հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան 1961, էջ 469:

² **Խանգադյան Ս.**, «Մատյան եղելությանց» վիպակ, «Հայաստան» հրատար., Երևան 1966, էջ 6-7:

Երկու վիպակներում ամենևին ինքնասպաստակ չեն քաղաքային ու գավառական պատկերներն ու մեծապես նպաստում են հերոսների բնավորության գծերի, հայրենի եզերքի նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի, նրանց աշխարհընկալման բացահայտմանը:

Քաղաքային բնապատկերները ներդաշնակվում են մարդկանց արտաքինի նկարագրություններին: Վիպակների հերոսներից շատերը քաղաքը շրջափակող լեռների նմանապատկերներն են կարծես, նրանց պես ամուր կառչած հողին, նրանց պես անդրդվելի ու հաստատուն:

Գավառական քաղաքի համապատկերն ամբողջացնում են հասարակական տարբեր շերտեր ներկայացնող մարդիկ՝ Գիրջ Պետրուսը, դպրոցի դիրեկտոր Ձենդ Մկրտիչը, զինկոմիսարիատի Յուրիկը, Կտրեմ-Կցեմ Համբարձումը, Ճառ Սիմոնը, Գրուզ Բարսեղը, Մըզմզ Վլադը, Սև Թուփին, Չեկայի Վրույրը, Դիք Ալբերտը, Կապիտոսող Սուդին, Թառչի Ղազարը, Փայտոնչի Գիրիշը, Բուխալտեր Մուխանը, Լդար Սերոժը, Գրաբար Գաբրիելը, Հռաքել Դայի Տասը տարի դատախազը, նրա եղբայր Փափախ Ավագը, Մեիրաբի Վարթերը, Պարան -Պարան Ավանեսը, Գյուրջի օբին, Ծմակ Խաչիկը, Թեփոած Երեմը, Ամբարի կատու Սողոմոնը, Յուլ Օհանը՝ յուրաքանչյուրն աշխարհընկալման իր կերպով, իր կենսափիլիսոփայությամբ:

Մարդկանց մականունները նույնպես խիստ բնութագրական են և հեռու են գրական պայմանականություններից: Դրանցից շատերը եկել են տասնամյակների խորքից և լիարժեք բնութագրում են մարդուն, իրենց մեջ ամփոփում խոր իմաստ, ժողովրդական կենսափիլիսոփայության դրսևորումներ և ամփոփ պատկերացումներ են տալիս հասարակական տարբեր շերտերի տրամադրությունների, բնավորությունների, սովորույթների վերաբերյալ:

Գավառական քաղաքում մարդկանց նախ և առաջ ճանաչում են «իրենց փոթով» («Եթե նույնիսկ քաղաքի քոթով Տատունց Անդրեաս հայրիկին հարցնես, թե ո՞րն է Հովհաննես Չաքարյանի տունը, ապա նա զարմացած կնայի քեզ ու անվերապահ կհաստատի, թե նման մարդ առհասարակ չի եղել ու չկա իրենց քաղաքում: Ապա նորից կզարմանա, երբ իմանա, թե դու Բարուլքի Ավանեսին ես որոնում»¹):

Քաղաքի մտավորականության համապատկերն ամբողջացնում են «միակ եղանակագուշակ, մի հին գրաբար օրացույցի տեր ու կարդացող Գրաբար Գաբրիելը, խմբագրության սրբագրիչ Վրիպակ Միքայելը, Ագրոնոմ Սաղաթելը, որոնք որոշակի սկզբունքների ու կայուն համոզմունքների տեր մարդիկ են, երբեք չեն ենթարկվել ժամանակի փոփոխություններին ու մնացել են մաքուր ու ազնիվ, ինչպես Ճել Ավան բիճան...

Այս ազնիվ ու քաղաքի համար խորհրդանշական կերպարների կողքին կան նաև մարդիկ, որոնց նկատմամբ իր որոշակի վերաբերմունքն ունի Ճել Ավան բիճան՝ Հռաքել դայի - Տասը տարի դատախազը, նրա եղբայր Փափախ Ավագը, Հիմարկ Ղևոնը...

Կյորեսեցիները նույնպես իրենց հատուկ վերաբերմունքն ունենին Գորիսի բնակիչների նկատմամբ, որոնք վաճառականներ էին ու պետական պաշտոն-

¹ **Խանգաղյան Ս.**, «Մատյան եղելությանց» վիպակ, «Հայաստան» հրատար., Երևան 1966, էջ 23:

յաներ՝ դյուքանդարները ու մեծամեծները, - ինչպես նրանց անվանում էր Աթա ապերը: Նրանք էին բուն օտարականները, որոնց դեմ կռվում էր բուն Կյորեսը:

Առևտրականների չափ Գորիսն ուներ բեյեր ու պաշտոնյաներ: Կային երեք Ներսես բեյեր՝ Հաստ Ներսես բեյ, Խուրդա կամ Կարծիկ Ներսես բեյ, Պրիստավի Ներսես բեյ և այլք: Բեյերի մեծ մասը կեղծ ազնվականներ էին, մի մասն էլ շառավիղն էին ազնվական հին տոհմերի և ունեին կալվածքներ, որոնց հասույթով անկարոտ ապրում էին: Այդպիսինն էր օրինակ, Պավլե բեյ Օրբեյանը, «Մշակ» թերթի հավատարիմ բաժանորդը, որը առանձնացած ապրում էր իր տանը, ինչպես իշխանը դոյակում:

Քաղաքի բնակիչներին Ս. Խանզադյանը ներկայացնում ու բնութագրում է Ճել Ավան բիձայի՝ նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի համապատկերում, որտեղ առանձնահատուկ տեղ ունեն ազնիվ աշխատանքով ապրող մարդիկ, հատկապես «կարդացած ու լուսավորյալ մարդիկ»՝ քաղաքի միակ ու նշանավոր լեզվաբան Անտոն ուսուցիչը, Գիրք Պետրոսը, դպրոցի դիրեկտոր ու կենսաբանության դասատու Ձենդ Մկրտիչը, Մեհրաբի Վարթերը, Արդար Հաբուղը, Թառչի Ղազարը, որոնց մի առանձին գույն ու երանգ են ավելացնում քաղաքի համապատկերին:

Ազնվության ու բարության մարմնացում է Թառչի Ղազարը՝ իր սկզբունքներին հավատարիմ («Երբ նրան հրավիրում են հարսանիք, խոսք չի տալիս, մինչև չհամոզվի, որ հարսը խոնարհ է ու պարկեշտ, փեսան էլ շառ ու շիլթաղ չի: Եթե նորապսակներն իր սրտովը չեն լինում, ապա շրջկոմի քարտուղարն էլ գա իր ետևից, հրավերը մերժում է»¹):

Տիպիկ սյունեցու մարմնացում է Սաղաթելը՝ «չապիկն ուզիր, կհանի կտա: Մերժել չգիտի: Քաղաքում շատերն են Սաղաթելից փող պարտք անում: Նրա հույսին են հատկապես քաղաքի պետական թատրոնի եկվոր դերասանները»: Վիպակում վարպետորեն է դրսևորվում Ս. Խանզադյանի արձակի պոետիկայի յուրահատկություններից մեկը՝ հեզևանքը՝ որպես բնավորությունների բացահայտման, մարդկանց բնութագրման միջոց:

Այս հերոսներին, ինչպես նաև կյորեսեցիներին հակադրվում են Գորիսի բեյերը, որոնք ո՛չ հոգի ունեին, ո՛չ հոգևոր շահ: Միայն Պավլի բեյն էր՝ Օրբեյանի վերջին շառավիղը, որ առանձնության մեջ ակնկալում էր սյունաց նախարարության վերադարձը: Իսկ Հաստ Ներսես բեյը և մյուս բեյերը գիտեին, որ աշխարհում կա պետ ու ստորադրյալ ու արանքում հարկավոր է թուղթ խաղալ, ուտել ու ձանձրանալ, ձանձրոյթից հորանջել, հորանջելով բամբասել, աղջիկներին տեղաց անել, տղաներին դարձնել ավելի բարձր պաշտոնյա: Նույնն էին նաև խոջաները:

Վիպակների հերոսներից շատերը, ճիշտ է, հանդես են գալիս պատումի առանձին դրվագներում, սակայն լրացնում են միմյանց, ունեն իրենց ներաշխարհը, աշխարհընկալման ձևը, երջանկության, երազանքների, ուրախության ու վշտերի վերաբերյալ իրենց մտասևեռումները:

«Մատյան եղելությանց» վիպակում ավարտուն է միայն Ճել Ավան բիձայի կերպարը, որին կարելի է տեսնել սյուժետային բազմաճյուղ ծավալումներում, բայց ուշագրավն այն է, որ մնացած կերպարները մի կողմից նպաստում են

¹ **Խանզադյան Ս.**, «Մատյան եղելությանց» վիպակ, «Հայաստան» հրատար., Երևան 1966, էջ 20:

գլխավոր կերպարի լիարժեք բացահայտմանը, մյուս կողմից՝ հնարավորություն են ընձեռում հեղինակին ներկայացնելու Սյունյաց լեռնաշխարհի մարդկանց յուրահատուկ գծերը՝ ուղղամտությունը, հայրենի եզերքի նկատմամբ սյունեցու առանձնահատուկ վերաբերմունքը, ճշմարտախոսությունը, իրերն իրենց անունով կոչելու համարձակությունը:

Քաղաքում հայտնի Անտոն ուսուցչի մեկնաբանությամբ «Ճելը» ևս հայոց գավառական բարբառի մնացուկ է: Նշանակում է «շուտ արա», «շտապիր»: Դե, ամեն առավոտ Ավան բիձան աղաչածայն շտապեցնում է որդուն («Ճե՛լ արա, Գրիգոր ջան, ճե՛լ արա»): Այդ ճելը փոթ մնաց նրա տան վրա: Ինքը՝ Ճել Ավան, տղերքը՝ Ճելի Գրիգոր, Ճելի Սուխան, Ճելի Ներսես, Վարդան, Իվան»¹:

Ճել Ավան բիձայի կերպարում միահյուսվում են հին ու նոր իրողությունները հաստատող անցյալն ու ներկան, որտեղ ապրում են վիպակի հերոսները: Նրա կենսապատումի աննշան թվացող դեպքերն ընդլայնվում, դառնում են ծավալուն ու ընդգրկուն, «զգայական-մտային հոսքի մեջ սրվում, պայծառանում են հնագույն պատկերների մանրամասները»:

Վիպակներում գործողությունները ծավալվում են համաժամանակային ու տարածաժամանակային հարթություններում: «Հենց նոր մտա լուսաբացից շիկնած մեր փոքրիկ քաղաքը և առաջինը հանդիպեցի մեր հարևան Ավան բիձային»²:

Իր կյանքի հոգսաշատ, հաճախ կիսաքաղց օրերին անգամ Ճել Ավան բիձան չի կորցրել մարդու նկատմամբ ունեցած իր հավատը («Դե, մարդ ասածը լավ արարած է») ու աշխատել է միշտ բարձր պահել իր անունը:

Հեղինակները իրենց վիպակներում մեծ վարպետություն և ստեղծագործական հնարագիտություն հանդես բերելով՝ չեն առանձնացնում գլխավոր կամ երկրորդական հերոսներ: Նրանք չեն ցանկացել ներկայացնել այս կամ այն հերոսի պատմությունը, եթե կարելի է այսպես արտահայտվել՝ *նրանց հերոսը այն կյանքն է*, որտեղ միմյանց հետևում են մեկը մյուսից բացասական հերոսները, և մեկը մյուսից համակրելի դեմքեր՝ դրական սկզբունքի պաշտպանները:

Երկու վիպակների ոճերի հստակությունը, գունագեղ պատկերավորությունը, տիպերի հոգեբանական կերտվածքը, նրբահյուս կառուցվածքը, սյուժեների խտացումը, երբ ոչ մի տողում չես զգում դատարկություն, ոչ մի էջում չես հանդիպում պատկերի ու մտքի Նոսրություն, այսօր էլ մնում են իբրև ընդօրինակման արժանի երևույթներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սովետահայ գրականության պատմություն, 1-ին հատոր, (1917), Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ, Երևան 1961:

2. Բակունց Ա., Ալպիական մանուշակ, «Հայաստան» հրատ., Երևան 1969:

3. Խանգաղյան Ս., «Մատյան եղելությանց» վիպակ, «Հայաստան» հրատ., Երևան 1966:

1 **Խանգաղյան Ս.**, «Մատյան եղելությանց» վիպակ, «Հայաստան» հրատ., Երևան 1966, էջ 23:

2 **Խանգաղյան Ս.**, «Մատյան եղելությանց» վիպակ, «Հայաստան» հրատ., Երևան 1966, էջ 3:

ОБЩНОСТЬ ГОРИССКИХ ОБРАЗОВ В ПРОИЗВЕДЕНИЯХ С.ХАНЗАДЯНА И А.БАКУНЦА - ЛИЛИТ ГРИГОРЯН - В статье мы ссылались на произведения С. Ханзадяна «От логики» и А. Бакунца «Кёорес». Новеллы рассказывают об отображать сохранившихся и утраченных полосы большой родины. Авторы ностальгической песни, видят необратимое прошлое своего родного города, жизнь и древние обычаи легенды историй. Мы сравнили новизну произведений, оценили их и продемонстрировали сходство между ними.

Ключевые слова: Сюник, Зангезур, Серо Ханзадян, «От логики», Аксель Бакунц, «Киорес».

GENERALITY OF GORIS CHARACTERS IN NOVELS BY SERO KHANZADIAN «REGISTER OF TRUE EVENTS» AND A.BAKUNC «KYORES» - LILIT GRIGORYAN - In the report we have referred to Sero Khanzadian's «Register of True events» and A.Bakunc's «Kyores» novels. The novels are mapping lost and maintained borders of the great motherland. The authors are singing a song of melancholy having in their minds eye the images of the unrecoverable past life and traditions of the motherland mysteriously wrapped in a curtain. We have compared the characters of the novels ,assessed them and pointed out features they have in common.

Keywords: Syunik, Zangezur, Sero khanzadian, «register of true events», Aksel Bakunc, Kyores, character.